ԲԻՒԶԱԿՆ

ՉԱՆԴԷՍ

ՊԻՏԱՆԻ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԵԱՑ

Ա. ՏԱՐԻ — ԹԻՒ 15 — 13/1 ՓԵՏՐՈՒԱՐ 1883

ՈՒՂԵՐՁ

ԱՌ ԲԱՐԵԱԷՐ ԲԱՐԵԿԱՄՍ

Քաջայոյս լինելով որ կան բազում բարեկամք, որք կուզեն և պատրաստ են օգնել և ձեռնտու լինել բարեսիրական նպատակներու եթէ բանաւոր կերպիւ իրենց ուշադրութեան ներուին անոնք, կը համարձակիմք հետեւեալ խնդիրը ընդհանուր կերպով առաջարկել :

Թէ գաւառներէն և թէ Պոլսոյ մէջէն ատեն ատեն խնդիր կուգայ մեզ թէ շատ կը փափաքին Բիւրակն Հանդիսի մէկ օրինակն ունենալ, բայց դրամական կարողութիւններին չը ներեր, և կուզեն որ եթէ կարելի է մեր կողմէն շնորհք ըլլայ իրենց, մեք մեր կողմանէ կարելի եղածը ըրած ենք և պատրաստ ենք ընել, բայց հարկաւ ահման մը կայ որմէ անդին չենք կրնար անցնիլ :

Արդ՝ ներկայ ուղերձիս հրաւէր կը կարդամք այնպիսի բարեկամաց որ կը փափաքին տեսնել ընթերցասիրութեան և դաստիարակութեան օր քան զօր ազգիս մէջ ծաւալիլն ու ընդհանրանալը, և յօժար են ազգասիրաբար օգնել այնպիսի աղքատ և անկարող ազգայնոց և ազգային վարժարանաց, որ թէեւ կարի կը փափաքին օգտակար թերթ մը իրենց ձեռք ունենալ, անձեռնհաս են եւ հետեւապէս գրկուած :

Սւելորդ է ըսել թէ մարդուս բարոյական և մտաւոր պէտքը հոգալը, նիւթական պէտքը հոգալէն առորին առաքինութիւն չէ : Նաև այս կերպ օգնութեան մը օգուտը կրկին է, քանզի միանգամայն թերթին յաջողութիւնը և յարատեւութիւնը կերաշխաւորէ :

Յուսով ենք որ մեր այս առաջարկութիւն թէ ի Պոլիս եւ թէ ի գաւառս կարող բարեկամաց ուշադրութենէն չի պիտի վրիպի :

Պարտ կը համարիմք այսու առթիւ մեր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել Մեծ. Միհրան Էֆ. Քիւրքճեանի, որ ազգասիրաբար Եօզղատու գաւառի երեք աղքատիկ դպրոցներու, այսինքն Զօրումի, Պօզուքի եւ բուն Եօզղատու մայր վարժարանի մէկ մէկ օրինակ նուէր ըրած է: Նաև ուրիշ բարեսէր ոմն Քիրասունի Լ. վարժարանի սանուց մի օրինակ նուէր ըրած է:

Ա. Զ Դ.

Հանդիսիս Ա. Բ. եւ Գ. Թիւերն սպառած լինելով՝ մեծ օդնութիւն պիտի համարիմք մեզ, եթէ մեր գաւառական յարգի գործակալք յիշեալ թիւերէն իրենց քով աւելցածներն անյապաղ մեզ դարձընելու բարեհաճին թղթատարութեան ծախքը մեր հաշոյն սեպելով՝ որով նորէն տպելու մեծ ծախքէն մեզ փրկած պիտի ըլլան։

Նաեւ թէ ի մայրաքաղաքիս եւ թէ ի գաւառս բնակող մեր աղնիւ բաժանորդներէն կը խնդրուի որ իրենց բաժանորդագիները փութան մեզ յղել, յիշելով որ բաժանորդութեան պայմաններս կանխիկ վճարում է։

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՔ

(Շարունակութիւն եւ վերջ տես Թիւ 14)

Մեր նախընթաց յօդուածով ջանացինք համառօտապէս ցոյց տալ թէ մեր ներկայ վիճակին մէջ որքան մասնաւոր կարեւորութիւն ունին նախակրթարանք, եւ թէ ինչպէս բարձր վարժարանաց օգուտն առաւել զգալի, մնայուն եւ ընդհանրական ընելու համար, և նոյն իսկ անոնց զարգացմանն համար հարկ է որ այն կրթական խոնարհ հաստատութիւնք իրենց մեզմիկ լոյսն տարածեն բովանդակ ազգին վրայ. որպէս զի հեռվհեռէ աւելի բաղմանան անոնք որք առաւել կամ նուազ կարող պիտի լինին բարձրագոյն կրթութիւն մը գնահատել և ժողովրդեան ամեն խաւերէն զտեալ տաղանդներ յերեւան գան և բարձր կրթութիւն առնելով իւրեանց զանազանեալ կարողութիւններով և ձիրքերով ծառայեն հանրութեան։ Երկարօրէն ճառելու տեղն չէ ատ նախնական և բարձրագոյն կրթարանաց սերտ առնչութեան վրայ, մեր միակ փափաքն այս է որ այս կապակցութիւնն առ հասարակ առաւել ճանչցուի և երկու կարգի հաստատութիւններն եւս զուգընթացաբար զարգացնելու ջանք չվնասուի։ Գիտեմք որ ընդհանրապէս ամեն ոք կընդունի այս պարզ ճշմարտութիւն. դժուարութիւնն միայն հոն է որ ամեն մարդիկ զայն ճանչնալով և ընդունելով հանդերձ առակաւին հանրութեան որդւոց յատկացեալ այս անշուք յարկերն ուշագրութիւն չեն գրաւած ըստ բաւականի։ Մեք կը բաղձամք տեսնել այս մասին անմիջական բարւոքումներ, թէպէտ այն բարւոքմունք ճըշդիւ բաղձացեալ աստիճանին չափ չը լինին։ Փոխան սպասելու մինչեւ որ առանձամբ ամենակատարեալ ծրագիրք նախնական կրթութեան համար, գոնէ ճիգ մը ընեմք առաւել միօրինակ նախնական կրթութիւն մը հայթայթել ժողովրդեան զաւակաց համար։

Մեք առ այժմ գիտաւորութիւն չունինք ծրագիր մը գնել աստանօր այսպիսի կրթութեան մը համար, և ոչ ալ անմիջական հարկ կը տեսնեմք անոր։ Այժմ ծրագիրներէ աւելի պէտք ունինք մի քանի էական սկզբանց կիրառութեան։ Այս սկզբանց մին է հնար եղածին չափ գործնական ընել այդ կրթութիւն։ Երկու սեռի համար եղած վարժոցներն ալ պարտ են առ այնպիսի գործնական կրթութիւն մը որ աշակերտք իրենց այլ եւ այլ կոչմանց մէջ կարենան առաւել կամ նուազ գործածել իրենց ստացած հմտութիւնները։ Վերացական գիտութիւններն անարգող չեմք, գիտեմք դասական հեղինակաց արժէքն և զայնս

ուսանելուն օգուտն, կը սիրեմք նաև դրամատեղծուԹիւն և կը հաւատամք անոր վառաւոր ազդեցուԹեանն ի վերայ մարդկային հոգւոյ, օտար չեն մեզ նաև լեզուագիտուԹեան օգուտներն, բայց այն նախնական կրԹուԹիւնն որ բազմաց համար միակ ա-ռիԹն պիտի ընծայէ պիտանի հմտուԹիւն ստանալու, յառաջ քան զամենայն պէտք է հայեցայեէ դիտուԹեանց այն առաջին տարրերն և նաև այնպիսի կերպիւ իւիք, որ գործնական կենաց մէջ իսկական օգուտ եւ ծառայուԹիւն մատուցանեն դոնէ պարզ քաղաքացիները յառաջ բերելու։ ԳիտուԹիւնք երօք պիտանի են մեր գործնական կենաց մէջ. բայց այնպիսի կերպ մը կայ զանոնք ուսուցանելու որ ամենայնիւ անպիտան կը ցուցնէ զայն յաչս ռամիկ ժողովրդեան։ Նախ և առաջ պէտք է վերցնել այս կերպն, եւ ռամիկ ժողովուրդն, որ ընդհանրապէս սրատես աչքեր ունի իւր շահերն տեսնելու, երբ տեսնէ Թէ ինչպէս պիտանի կրնայ լինիլ պարզ կրԹուԹիւն մը կենաց որ և է կոչման մէջ, շատ շուտով պիտի սկսի դպրոցներն յարդել եւ անոնց համար հարկ եղած զոհողուԹիւններն իսկ մեծադիւր կատարել։ Պէտք է խոստովանիլ Թէ մինչև ցարդ ընդհանրուԹեան տրուած կրԹուԹիւնն՝ զայն ժողովրդական և առ հասարակ օգտակար հանդիսացնելու բնուԹիւն չունի։ Գիւղերու և քաղաքներու մէջ ընդհանրապէս ամբողջ ժողովրդեան տղայքն խմբովին դպրոցներն կը յաճախեն, և երբեմն տարիներով, և սակայն այս դպրոց յաճախող ժողովրդական տղայոց բազմուԹիւնն մի քանի տարիէն վերջ երբ կը մտնէ գործնական կենաց մէջ, մի քանի փայլուն բացառուԹիւններէ զատ, կը գտնեմք երիտասարդուԹիւն մը, նոր սերունդ մը, որ կամ բնաւ չտարբերիր կամ հազիւ կը տարբերի նախորդ սերունդէն, և ափսոս, այդ տարբերուԹիւնն իսկ բազմից սաոչնուԹեան տարբերուԹիւն է և ոչ Թէ բարձրուԹեան, դի յաճախ այս երիտասարդք սակաւ ինչ առաւել մոլի, սակաւ ինչ նուազ աղգասէր եւ նուազ բարեկիրթ անդամներն կը լինեն այն ազգին որ սպասելով կը սպասէ բարձրագոյն կարգի սերնդեան մը։ Երբոր հասարակ ժողովուրդն գործնական օգուտ չը տեսներ այս դպրոցներէն, յայնժամ նոցա օգտակարուԹեանց համար լրագրաց միւներուն մէջ մեր բարձրացուցած գոչիւններն և ճարտարիսօսական բացագանչուԹիւնք չատ մեծ ազդեցուԹիւն չեն ըներ մեր Թմբրեալ ժողովուրդներն զարԹուցանելու կրԹուԹեան գործոյն մասնակցելու համար։

Յիշեմք ասոնցմէ նաև այն երկրորդ գլխաւոր սկզբունքն զոր ճանաչել ու գործադրել այնքան հարկ է, ինչպէս ամեն կրԹական հաստատուԹեանց՝ նմանապէս նախնական կրԹարանաց մէջ։ Պէտք է կրԹել կամքն։ Կամքն մեզ բարձրագոյն կարողուԹիւնն է, ինչպէս հարկ է կրԹել ամեն մեր կարողուԹիւններն, նոյնպէս բարձրագոյն կարեւորուԹիւն ունի կրԹել կամքն։ Առանց կամքի՝ կրԹուԹեան միւս կարողուԹեանց կրԹուԹիւն չը կրնար ինքնին յառաջ բերել բաղձացեալ երջանկաւէտ արդիւնքն։ Պէտք է տղայոց ուսուցանել այնպիսի եղանակ մը որ իւրեանց մտաւոր կըր-

թուԹեան հետ ի միասին ստանան նաև կամքի կրԹուԹիւն որ տալըն է բարուց։ ԿրԹուԹեան միակ և գլխաւոր նպատակն լինելու չէ հմտուԹիւն տալ, և լցունել յիշողուԹիւնն։ Հնար է այնպիսի մտաւորական աշխատուԹեանց մէջ մտցունել աշակերտն, որ անոնց միջոցաւ ոչ ԹէԹ միայն բան սովրի այլ ուսանելու եղանակն ստանայ։ Ուսանելն դիտնալէն աւելի օգտակար է։ Եւ այն եղանակն է յաւէտ և ոչ ԹէԹ վերջնական վախճանն որ կը կրԹէ զկամքն, գործն է յաւէտ՝ եւ ոչ ԹէԹ արդիւնքն, ստանալն՝ և ոչ ԹէԹ ստացեալ իրն որ պիտի արատադրէ կասքի և բարուց կարեւոր դաստիարակուԹիւնն։ Ուսուցիչն պարտի առաջնորդել իւր ուսանողներն այն դժուարին. ճանապարհներէն որոցմով իրենք իրենցմէ պիտի հասնին վառաւոր վախճաններու։ Բոլոր ուշադրուԹիւնն նուիրել. մտայ ամեն ճիդն ի գործ դնել. դնել միտքն այս ինչ ուղղուԹեան մէջ և չարունակ պահել անդ. ոչչափ ժամանակ որ պէտք է. խորհիլ և ղգալ ԹէԹ ինք իւր ճամբան և եղանակն գտնելու է գիտուԹեանց համար. սոքա են այն կարեւոր սկզբունքներն որ ուսանողք ի գործ դնելու են իրենց կամքը կրԹելու համար. ոչչափ ժամանակ որ տղայք միայն կ'ընդունին ուրիշին պատրաստածն և միայն արդիւնքն կը ստանան դիւրուԹեամբ առանց ի գործ ածելու մտայ ամբողջ կորովն, նոյնչափ աւելն ԹուլամորԹ և ստորին աստիճանի մարդիկ միայն կունենանք։ Ա.յս է այն կարեւոր սկզբունքն որ ի վեր քան զամենայն հարկ է մուծանել մանաւանդ մեր Արեւելեան կրԹուԹեան մէջ, որ սովորաբար հանգիստ և դիւրուԹիւն սիրող բնուԹիւն մը կուտայ մեզ։

Ուրեմն նախնական կրԹարանաց համար այնպիսի ծրագիր մը լինելու է որ իրեն նպատակ ունենայ ոչ ԹէԹ բազմաԹիւ սկզբնաւորուԹիւններ ընել և զանոնք ամենքն ալ անկատար ԹողլուՀ գործնական կենաց համար ամենայնիւ անօգուտ կացուցանել, այլ ամեն պիտանի եւ կարեւոր դիտուԹիւններն ընտրելով ջանալ զանոնք ամբողջովին ուսուցանել, այնպէս որ երբ տղայք դպրոցի սրահներն կը Թողուն կենաց սովորական գործոց պարապելու, կարող լինին օգտակարապէս ի կիր արկանել իրենց ստացածն. եւ, երկրորդ, ուսուցանելու է զանոնք այնպիսի եղանակաւ մը որ կամքն կրԹուի եւ անհատական ու անկախ հետազօտուԹիւն և ուսում ընելու ունակուԹիւն մը ստանան աշակերտք։ Ա.յս երկու վախճանաց համար եւս խիստ կարեւոր է ընդհանուր տեսչուԹեան մը ներքև դնել բոլոր նախակրԹական հաստատուԹիւնները։ Գոնէ իւրաքանչիւր գաւառի նախակրԹարաններն կարող եւ լմնատուն տեսչուԹեամբ մը կառավարուելով՝ ընդհանուր միօրինակուԹիւն մը ցոյց տալու են, որպէս զի ընդհանրական օգուտները սպասելու առաւել կամ նուազ երաւունք ունենանք։ Առանց այսպիսի տեսչուԹեան մը միևչև իսկ ամենապատուական ծրագիրք իսկ պիտի չկրնան գործադրուիլ և օգուտ արտադրել։ Մի պատասխանատու անձ գործոյն ղեկն իւր ձեռքն բռնելու և յառաջ վարելու է զայն ի բաղձացեալ կէտն։ Եւ հոս կարգը կուգայ որ յիշեմք ԹէԹ այսպիսի տեսուչ մի և ան-

կարող պիտի լինի իւր նպատակին հասնելու, եթէ իւր ձեռաց մէջ չունենայ այնպիսի դաստիարակներ որք ճանչցած են իրենց գործոյն բնութիւնն և յօժարակամ սիրով նուիրած են ինքզինքնին նոյնին: Հարկ չէ որ ամեն ատեն խիստ բարձր կրթութիւն առած անձինք լինին սորա, թէպէտ ճշմարիտ է թէ որքան բարձր լինի իւրեանց կրթութիւն այնքան օգտակար կը լինին, սակայն այսչափն սահման է, որ թերեւս, անկարող և ակարամիտ անձանց գործն չէ այս: Սովորաբար բանի տեղ չեն գրուիր նախակրթարանի ուսուցիչք, և աժան գնով անձինք կը վարձուին որք կանոնաւոր դաստիարակութիւն ստացած չեն: Մահացու սխալ մ'է այս: Ամեն բանէ յառաջ այս խնդիրն լուծուելու է: եթէ նախակրթարանաց արժէքն պիտի ճանչցուի, եթէ նոցա մէջ գործող անձինք դաստիարակեալ, եռանդուն և իրենց ծանր պատասխանատուութիւն զգացող մարդիկ պիտի լինին, և թէ պիտի դիտնամք յարգել և վարձատրել զանոնք որպէս արժանն է, կրնամք խորհիլ նաև որ դէմ առաջին քայլն առած ենք:

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՏՆԿՈՑ

Բնութեան ի գործ ածած զարմանալի մէջոցները ամենէն աւելի կերեւին, երբ կը դիտեմք թէ ինչ դիւրութեամբ կը ծածկէ այն երկրագունդս մակերեւոյթն բուսականներով: երբեմն կը թուի թէ տեսակ տեսակ բուսեղինաց անհուն բեղմնաւորութիւնն բաւական է այդ նպատակին համար, երբեմն ալ կը տեսնեմք որ բնութիւնն ամենէն հանճարեղ մէջոցներն ի գործ կը դնէ իւր պատուիրներն և սերմերն բեւեռէ ի բեւեռ փոխադրելու:

Տունկեր կան որոց սերմերուն թիւն այնքան մեծ է որ անհատատալի կը թուի: Ըէյ բնագէտն մի խաչխաչի ծղօտի վրայ 32,000 սերմ համրեց. և Լինեէոս կ'ըսէ թէ ծխախոտի մէկ ծղօտն երբեմն 40,000 սերմ կունենայ. Տոտարտ անուն գիտունին տուած թիւերն աւելի զարմանալի են, քանզի ըստ բանի իւրում կնճնիի ծառ մը ամեն տարի 529,000 սերմ կ'արտադրէ: Յայտնի բան է որ եթէ բոլոր սերմերն բուսանին, մի քանի սերունդ անցնելէ վերջ բուսականք բաւական պիտի լինին րոլոր երկրագնդիս երեսն ծածկել: Բայց բազմաթիւ պատճառք կան որ արգելք կը լինին այս սպառնալիս արշաւանաց: Ա.յս արգելքը կը դնեն կենդանիք, կլիմայիս խստութիւնն և մարդն որոյ քաղաքակրթութիւնն բնութեան սահմաններուն մէջ կը մնանէ և պատուար կը կանդնէ ընդդէմ նորա: Ա.յս պատճառաւ է որ բուսականաց զարհուրելի արշաւանքն կարողացած չէ գրաւել համայն աշխարհն. քանզի իրօք կան այնպիսի զարհուրելի բեղմնաւորութիւն ունեցող բուսականք որոց համար առանց չափազանցութեան կրնայ ըսուիլ որ եթէ հրաշիւք անոնցմէ միայն սերմերն տարածուին բոլոր աշխարհի վրայ և ամենքն ի միասին սկսին աճիլ, միւս օրն ողջոյն երկիրն անոնց բոյսերովք կրնայ ծածկուիլ, որովհետև այնպիսի տունկեր կան որոց միայն մին՝ հազար միլիոններով սերմ կը պարունակէ, և թէպէտ այն սերմերն անտեսանելի

են աչաց և մանրացուցիչ միայն կերեւին, սակայն անոնք մէն մի խոշոր բոյսեր արտադրելու զօրութիւն ունին, և այնքան արագաբար որ շատ հեղ մէկ դիշերուան մէջ դդումի մը մեծութիւնն կրնան։

Արդ ինչ որ ասա յառաջ պիտի բերեմք այս է թէ այս զարմանալի բեղմնաւորութիւնէն ի զատ բնութիւնն ուրիշ միջոցներ ևս ի գործ կ'ածէ նոր տեղեր բուսականութիւն արտադրելու և բազմացնելու համար։

Ա. այս միջոցներէն մին է օդն որ նշանաւոր դեր մը կը կատարէ բուսական կեանքն այլ եւ այլ կողմեր ցրուելու մէջ։ Բազմաթիւ թեթեւ սերմեր կան որք փոքր փետուրներ և մազկային թեւեր ունին և հողմերէն կը տարուին հեռաւոր վայրեր։ Սերմը զատուելով մայր տունկէն օդային շարժմանց միջոցաւ, ամենէն երկար ճանապարհորդութիւններն կը կատարէ։ Ամենամեղմ զեփիւռն կառնէ զայն հովտին խորերէն և կը բարձրացնէ մինչ ի կատարս լերանց։ Եթէ փոթորիկն սաստկանայ, փոքրիկ սերմերն հզօր հողմերէն վարուած կը խառնուին մրրկային ամպերու հետ, կանցնին ովկիանոսներէ և յետոյ կերպիւ խիւք ի վայր կիջնեն հեռակայ ծովեզրի մը վրայ։ Կը պատմուի թէ շատ անգամ մրրիկներէ վերջ Սպանիոյ հողն կը ծածկուի այլ և այլ օդային սերմերով՝ որք կուգան յԱմերիկեան երկիրներէ։ Լիննէոս կը կարծէր թէ Բոնիֆաս Սերիզեա կոչեցեալ բոյսն այսպէս Բանատայէ յԵւրոպա եկած է։

Օդը տակաւին ուրիշ դործեր ալ կը կատարէ. իւր շարժմանց մէջ ամբողջ տունկեր կառնէ կը տանի հեռաւոր վայրեր և զանոնք ի վայր կը թափէ իւր առատ կենդանի անձրեւ։ Կան տեսակ տեսակ մամուռներ որք Ասիոյ լեռներէն ճամբայ ելնելով ուղեւորութիւն կընեն ամպերու մէջէն եւ մի և նոյն տեղն չդայլն շոգի ծծելով ամպերէն՝ կաճին այս դիպուածական տարադնացութեան մէջ։ Սոքա հողէն բաժնուելով հողմոյ միջոցաւ՝ երբ հապիւ թէ գնդասեղի մը գլխու չափ մեծութիւն ունին, փոքրիկ կաղինի մը չափ մեծցած կը լինին՝ յորժամ իրենց օդային ճանապարհորդութիւնն լրացնելով՝ կիյնան ի վայր իւրեանց ընիկ ժայռերէն շատ հեռի վայրերու վրայ։ Ա. այս մամուռներէն շատն ուտելի են և շատ անգամ անապատներու ատաղի վրայ տարածուած կը լինին յետ փոթորկայ։ Երբեմն սոքա գետնի վրայ իրարու վրայ դիզուելով թանձր խաւ մը կը կազմեն եւ խոնջեալ ճանապարհորդին հաճոյական կերակուր կը մատակարարեն։

Մի քանի տարի յառաջ Թէնարտ քիմիաբանն Դիտութեանց Ակադեմեայն ներկայեց այս թափառիկոտ տունկերէն մին զոր հողմունք Ալբարատ լեռնէն առնելով՝ շատ հեռաւոր տեղեր տարած էին։ Տնկոց այս անձրեւն երբեմն մինչև հինգ կամ վեց մատնաչափ թանձրութիւն ունեցող խաւ մը կը ձեւացնէ։ Մարդիկ կը կերակրուին անով և իրենց չկրցած սպառածն արջառներու կը տրուի։

(Շարունակելի)

ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՔ ՆԻՒԹԵԱՆՈՒԹԵԱՆ

Բնական պատմութիւնն լոյս չտար իրաց սկզբնաւորութեան վրայ։ Իր վրայ չառնուր պատմել թէ ինչ էր

սկիզբն և ինչ պիտի լինի վախճանն։ Ենթադրելով թէ նիւթեղէն մասունք գոյ էին անգամ մը, կարող չէ ըսել մեզ թէ ընդհ՚ր զարմանապանչ յառաջադիմութեամբ մը շարժեցան յաւէտ քան թէ քառասական անկարգութեան անվախճան շրջանով մը։ Նիւթոյ մէջ ինչ կենդանի կամ անկենդան զօրութիւն կայ որ յառաջ կը մղէ զայն և արտադրել կուտայ նմա մի դեղեցկութեան աշխարհ, արտադրել կուտայ մի Նեւտոն և մի Շէքսփիր, և ինչո՞ւ այդ նիւթն յառաջ չէ բերած չաղալսի կամ հրեղէն միգայ անվերջ շրջան մը։ Արարչութեան բարձր կարգերն ոչ թէ միայն կը դերազանցեն սորին կարգերն՝ այլև կերպիւ իւիք իրարու հակառակ իսկ են և բնական պատմութիւնն սորա պատճառն կարող չէ տալ մեզ։ «Փոխոխութիւն՝ անփոփոխելի նիւթէն, մահ՝ անկործնջելիէն, չարժուամ՝ բացարձակ դադարուամբ, կեանք՝ մեռեալէն, ղգայուս՝ անղգայէն, նպատակ՝ այնպիսի պատճառներէ որք կուրաբար կը գործեն, խնամոցականութիւն՝ անխնամականէն, հոգի՝ անհոգեղինէն»։ Այսպիսի են այն հակասութիւնք որ, ըստ Հոֆմանի, նիւթեանք պարտին ընդունիլ։ Նիւթոյ բոլոր յատկութիւնք անբաւական են բացատրելու այս փոխակերպութեանց պատճառներն։ Անոնք որ այս ձեւակերպութիւններն արտադրելու զօրութիւնն հիւլէի մը կ՚ընծայեն, զայն իրենց կուռքն կընեն, և զԱստուած չճանչնալու համար ստեղծագործութեան զօրութիւնն այդ ընչին կուռքին կը նուիրեն։ Նիւթեանութիւնն ոչինչ չբացատրեր. իւր լուծած խնդիրներէն աւելի դժուարին խնդիրներ կը թողու։ Յորժամ կը նայիմք աշխարհի չքեղութեան վրայ, յորժամ կը դիտեմք զամառն իւր դեղապայծառ փառօքն, կը դիտեմք ղծոցն իւր ահեղութեամբն, և զաստեղայց վեհաշուք կառուցն, այն բարդ ի բարդ գիւղեալ աշխարհներն որք կը ներկայեն մեզ փառք ի վերայ փառաց, զարմանալիք ի վերայ զարմանալեաց, յորժամ կը դիտեմք զայսոսիկ, այն փոքրիկ հիւլէն և իւր փոքրիկ գործերն գոհ պիտի ընե՞ն զմեզ։ «Աչքերնիդ վեր վերցուցեք, ու նայեցէ՛ք. ասոնք ո՞վ ստեղծեց։»

Արարչութեան այս դաղափարն հնար չէ երբեք ջնջել, զի մեք որ ունիմք զայն մեր մտաց մէջ, արարչութեան մի մասն եմք և հօր մը զօրութեան գիտակցութիւնն կուգայ մեզ իբր ժառանգական իրաւունք և կը բաբախէ մեր արեան զարկ բաղկինեբուն մէջ, գիտութիւնն կրնայ բարւոքել Ս. գրոց այլև այլ մասանց մեր տուած մեկնաբանութիւններն, բայց այս մեկնութիւններէն կախումն չունի երբեք մեր հաւատքն ի Հայրն մեր երկնաւոր, և տակաւին այն Հայրն կը նայի Իւր որդւոց վրայ և անոնք պատասխան կուտան երբ Նա կ՚ըսէ «Ա՛յս ամենը Իմ ձեռքս ստեղծեց»։

ՎԻՇՏՔ

Դժուարին է տառապանաց ձմեռուան մէջ մնալ։ Դժուարին է շրջապատիլ ընտանեկան վիշտերով և դժուարութեամբք։ Բայց երբոր ընտանիք մը նեղութեանց և վշտաց մէջէն ճանապարհ մը կը գտնէ առ Աստուած երթալու, երբոր փորձութեանց և չարչարանաց մէջէն ընտանիք մը հուսկ

ուրեմն գիտութիւն կը սահանայ այն ամենուրեք փրկչին վրայ՝ որ մեր բոլոր վշտերն կրնայ, որ կը կրէ մեր մեղքերն և կը տանի մեր տրտմութիւններն, այդ ընտանեաց համար արդէն թռչնոյ երգերուն ժամանակն հասած է. թէպէտ իւր ձմերային մթին օրերուն մէջ իսկ լինի։ Մեծ խնդիրն այն չէ որ քու կարօտութիւններդ ազատիս, այլ այն է որ խաղաղութիւն ու խնդութիւն ունենաս ի Հոգին Սուրբ։ Զկնի այնպիսի տուներ որոց որմերուն վրայ նախ ծագկեալ գարնան ժպտուն լոյսն, և ապա Արդարութեան Արեգակն իւրնոյ տառապանաց մէջ։

Հիւանդութեան, սգոյ և տրտմութեանց առիթներ կան որ կը հանդին ընտանեաց։ Օրեր կան որ, թէպէտ շատ կարճ օրեր են, բայց, ո՜հ, արշալոյսի երկար կը թուին մեզ, քանզի, ինչպէս որ կարճ ճանապարհ մը երկար կը թուի նման որ ծանր բեռ կը կրէ, այսպէս ալ այն օրերն որք տրտմութիւն հագած են և որոց վայրկեաններն կը չափուին արտասուաց կաթիլներու թափուելովն, երկար օրեր են, թէպէտ կարճ ալ լինին։ Որքան շատերն կանոնին նեղութեանց ծովէն։ Ո՛րքան բազում են անոնք որ հիւանդութեանց և տառապանաց մէջ ընկղմած են, և սակայն կամ մխիթարութիւնք վերջապէս կուգան, կամ ի պատասխան աղօթից՝ ձայն մը կուգայ որ կըսէ, «Թող միայ ցաւը որ տեսնուի թէ իմ շնորհս բաւական է քեզ համար»։ Ցաղթողութեան, սիրոյ և յաղթանակի մեծ խնդութիւնք կան. բայց կայ վշտի և տրտմութեան վարձատրութեան վերաբերող խնդութիւն մը ևս որ սրտի գոհացած որ և է խընդութենէ առաւել երկնային և գերազանց է։

Ցորժամ Հոգին վիշտ կը կրէ և իւր վիշտերն կը տանին դինքն մինչ ի խորանն Աստուծոյ, կը տառապի այնքան, մինչև Քրիստոս գոգցես իւր բաղկաց մէջ կառնու զայն և կ'ըսէ. «Ատ հանգչէ, մինչև որ փոթորիկն անցնի.» այդ Հոգին այնպիսի գերազանց խնդութիւն մը կզգայ զոր միայն զայն զգացողներն կրնան հասկնալ։

ԲՐԱԶՈՑ

ԿԱՄ

ԿՐԱՑԵԱԼ ԿԵՆԴԱՆԻՔ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ

(Շարունակութիւն տես Թիւ 14)

1771 ի դեկտեմբերին, առաջին անգամն ըլլալով՝ տեսնուեցաւ վիլլս գետակին ափանց վրայ (այս գետակը հիւսիսային լայնութեան 64° էն անցնելով եւ Եաքութսքայի ստորոտէն ընթանալով լէնա գետոյն մէջ կը թափի) սառուցեալ աւազներու մէջ թաղուած ռնգեղջիւրի մը դիակը։

Պալլասի ճամբորդութիւններէն հետեւեալ մռայլ պատմութիւնը կը քաղեմք հոս։

«Յայսմ ձմեռան Եաքութսքացիք վիլլսի մօտ որսորդութեան ելնելով, կը դտնեն անծանօթ խոշոր անասնոյ մը մարմինը։ Երբ ես ու Եաքութսքայի կուսակալը կ'իմանամք այս դիւտը, անասնոյն գտնուած տեղը երթալով, որ հեռի էր ի մէնջ 40 մղոն, կը տեսնեմք անասունը գետակէն 2 մեթր անդին աւազին վրայ կիսաթաղ։ Կը չափենք մարմինը, որ Ռուսական 3, 75 կանգնոյ երկայն եւ 3, 5 կանգնոյ լայն էր։ Անասնոյն մարմինը, տակաւին իւր մեծութեանը մէջ, ծածկուած էր մորթով, որ կը նմանէր կաչիի, բայց այնչափ ամրակառոյց էր որ միայն ուժերը եւ դլուխը կարացաք վերցնել.

ոտքերէն երկուքը իրգուխթաք խրկեցինք եւ երրորդն ալ եաքուխթաք. այս անասունը առաջին անգամ պինքն տեսնողին իսկ կը յայտնէր թէ ես ռնգեղջիւր մը եմ, մանաւանդ գլուխէն, որ իւր մարթովը տակաւին ծածկուած ըլլալով, դիւրաւ կը ճանչցուէր: Մարթը իւր արտաքին կազմուխթիւնը ամբողջապէս պահած ըլլալով, կարմ մազեր կը տեսնուէին: Աչտեւանուշքը բոլորովին ապականեալ, չէին երեւնար: Գանգին խոռոչին մէջ եւ մարթին ներքեւ աստ անդ նիւթ մը տեսայ որ փտած մսային մասանց մնացորդն էր: Ջիղերու եւ ճաուններու մնացորդներ իսկ կային ոտիցը վրայ: Գլուխը իւր եղջիւրներէն եւ ոտքերը իրենց սմբակէն մերկ էին: Եղջերայց տեղը, մարթը եւ առջեւի ու ետեւի ոտից մէջ եղած հեռաւորուխթիւնը ստուգիւ կը յայտնէին թէ այս անասունը ռնգեղջիւր մ'էր: Արդ՝ հոս պիտի բացատրեմ այն պատճառները, թէ ռնգեղջիւր մը ինչ տեսն կարողացած է գալ աշխարհիս ամենահիւսիսային կողմը, էնպայի ափանց մօտ. թէ ինչպէս կը գտնուին այնչափ տարօրինակ անասնոց բեկորք ի Սիպերիա եւ թէ ինչպէս եղած է որ այս բեկորք մինչ ցարդ չեն փտած:

«Ա.յն քաղաքը զոր վիլուս գետակը կ'ոռոգէ, է լեռնային. այս լերանց բոլոր խաւերը հորիզոնական են, եւ որձաքար եւ երկաթի հետ ի բնէ բաղադրեալ ծծմբախառն հողեր կը պարունակեն: կը տեսնուի նաեւ այս գետակին ափանց վրայ հանքածխոյ բեկորք, ուստի հաւանական է որ այս գետակին մօտ լերանց գագաթը ածխահանք ըլլայ: Գետակին դէմ բլրակ մը կայ որոյ բարձրուխթիւնն է 30 մէտր, եւ, թէպէտ աւազուտ, երկանաքարի խաւեր կը պարունակէ: Ուրեմն ռնգեղջիւրին մարմինը ճաքարով խառն աւազի մէջ թաղուած է այս բլրակին մօտ, եւ հողին բնուխթիւնը որ միշտ սառնային է, զայն պահած է: Վիլուսի մօտ գետինը երբեք մեծ խորուխթեամբ չհաւիր. արեգական ճառագայթները աւազուտ տեղերուն հողը երկու կանգուն (Ռուսական) խորուխթեամբ կը կակղացնեն: Ա.յն ձորերը եւ հովիտները որոց հողը աւազի եւ կաւի խառնուրդ մ'է, ամառան մէջ կ'ոկսին սառիլ բաւական խոր իրենց մակերեւոյթէն: Ա.ռանց ասոր, այս անասնոյն մարթը եւ նորա շատ մասերը այսպէս երկար ատեն չսիտի կարենային անապական մընալ: Ա.յս անասունը հարաւային աշխարհներէն հիւսիսային սառուցեալ երկիրները ջրհեղեղի ժամանակ միայն գացած է, զի ամենահին ժամանակագրուխթիւնք չեն խօսիր հողագնդիս մէջ ջրհեղեղէն աւելի նոր երկրային փոփոխուխթեան մը վրայ, որոյ կարենաք ընծայել ռնգեղջիւրի այս նշխարայ եւ Սիպերիոյ ամեն կողմը ցրուած փղի ոսկերց պատճառը»:

Մինչ հոս խօսեցանք հին աշխարհին միայն երկու ցեղ խոտակեր չորքոտանեաց վրայ որք արդի աշխարհէն աներեւուխթացած են. պարտ է այժմ խօսիլ նոյնպէս աներեւուխթացած ուրիշ ցեղ խոտակեր չորքոտանեաց վրայ, որք իրենց ձեւովը ու մեծուխթեամբ հին աշխարհին իրենց ժամանակակից կենդանեաց մէջ մեծ տեղ բռնած էին եւ այժմ իսկ նոցա բրածոյ բեկորք պիտոյ հետաքրքրուխթիւնը եւ ոամկայ ղարմանքը կը գրգռեն: Ա.յս կենդանիք կը կոչուին մաղոսօնդ եւ տիւնոթերիում:

Մաղոսօնդը դրեթէ արդի փղին ձեւը ու հասակն ունէր, միայն թէ ընդհակառակն մարմնոք աւելի երկայն եւ անդամոք աւելի թանձր էր անկէ: Ժանիքներ եւ շատ հաւանական է որ պատիճ մ'ալ ունէր: Ա.յս կենդանին իւր հասու ակռայներուն ձեւովը, որ իւր գործարանաւորուխթեան աւելի որոշիչ յատկուխթիւնն է, կը տարբերի արդի փղէն: Ա.յս ակռայները դրեթէ ուղղանկիւն են իրենց չրջանակին մակերեւոյթին վրայ կլոր ծայրերով կոնաձեւ խոշոր բշտիկներ կան, եւ, ըստ տեսակաց անասնոյն, չորս կամ հինգ զոյգ են: Ա.յս

ակռայներուն ձեւը յոյժ որոշ եւ յայտնի է. նոքա երբեք չեն նմանիր դիչակեր անասնոց ակռաներուն, այլ խոտակերաց եւ մասնաւորապէս գետաձիոց ատամանց:

Մասդօտոնդի դոյութիւնը միայն վերջին դարու մէջ յայտնի եղաւ Գաղիոյ մէջ: Թէպէտեւ 1705 ին Միացեալ Նահանգաց մէջ այս անասնոյն մի քանի ոսկրները գտնուած էին, բայց այս գիւտը եւ ոչ մի ուշադրութիւն գրաւած էր: 1739 ին, Գաղիացի պաշտօնակալ մը, Պար. Լօնկէօլ, Միսիսիբի երթալու համար Օհիո մեծ գետը չրջապատող անթափանց անտառներէն երբ կանցնէր, իրեն ուղեկից վայրենի պահապանները ճահճի մը ափանց վրայ դիպուածաբար կը գտնեն այլ եւ այլ ոսկրներ, որոց չափերը անծանօթ անասնոց կը վերաբերին: Այս ճահճին մէջ, ղոր տեղացիք աղի մեծ ղիհ կը կոչեն, աղի ջուրց հոսանքներ կ'անհետանան. եւ, ինչպէս որ դիտենք, թէ աղը միշտ սիրելի ու անհրաժեշտ է խոտակերաց, ամեն ժամանակ վայրի որոճողներ գունդագունդ հոն կը դիմեն: Հաւանականաբար այս պատճառաւ է որ երկրագնդիս նախնական վիճակին չորքոտանեաց այնչափ բազմաթիւ բեկորք հոս դիպուած են: Անտարակոյս այս անասունք յաճախը կակուղ եւ ալմուտ այս լճին ցեխին մէջ ընկղմելով հեղձամահ եղած են: Պար. Լօնկէյլ այս ոսկրներէն մի քանի հատ առնելով՝ ի Գաղիա վերադարձին, Տօպանսոնի եւ Պիւֆոնի տուաւ զատ ոսկր մը, ժանիք մը եւ երեք ակռայ:

Տօպանսոն լուրջ քննութենէ մը յետոյ յայտնեց թէ այս ակռայները կը վերաբերին գետաձիոյ, իսկ ժանիքը եւ գոյն այն մեծ ոսկրը փղի մը:

Իսկ Պիւֆոն յայտնեց թէ այս ոսկերք կը վերաբերին փղի մը, որոյ ցեղը աշխարհիս նախնական ժամանակին մէջ միայն ապրած է: Ա.յն ատենէն, առաջին անգամն ըլլալով, երկրիս նախնի ժամանակաց յատուկ անասնոց ցեղերուն ստոյգ գաղափարը յղացան բնագէտներ: Ա.յս գաղափարը դարէ մը վերջ ծնանելով իւր զարմանալի պտղօք բնական գիտութեանց եւ փիլիսոփայութեան սքանչելի նիւթեր մատակարարեց: Մ. Ա.

(Շարունակելի)

ԱՌ ՄԱՆԿԻԿՆ

Կամառք աստեղց հեշտալուսիկ
Գեղազարդեն զերկինս կամար.
Եւ անմրադ խեղճին խցիկ
Նոցին ի չղ վայելէ յար:
Ֆո գեղափայլ բիբեր մանկիկ,
Սրտիս աստեղք են արփենիք:

Ծաղկունք ղաչտ սգենազարդեն,
Ի'լ բոյր քաղցրիկ ընուն զայեր.
Անոյշ հառոյք աչաց ապդեն,
Սրտէ ի բաց տանին վշտեր:
Սրտիս ի սէր սնեալ, մանկիկ,
Ֆեւ դաչտ չքեղ է սենեկիկ:

Որպէս արեգ արեւելից
Վարդակարմիր զարթնու ի ծոց,
Կենաց տարերս բաչխել էից,
Նոյնպէս եւ դու ի քոյդ օրոց:
Ա.յգուն այգուն ես արեւիկ,
Ցորժամ աչերդ բանաս, մանկիկ:

Ա.յնչափ ախորժ չէ իմ ունկան
Սրտահաճոյ ձայն նուագաց,
Եւ ո'չ խոխոջն՝ դիւթիչ այնքան,
Կարկաչահոս ջինջ վտակաց:
Որչափ յառաջնուս, դու մանկիկ,
Ի նուագդի ձայնես, հայրիկ:

Թող պատուական ականց չարքեր
Փայլեալ ի չղ ակնապարար,
Հրճուեցուն են վեհից սրտեր,
Ցորժամ խօսիս խնդապատար:
Թոթով լեզուիդ բառեր, մանկիկ,
Ա.նգին գոհարք չողշողենիք:

Բազմազուարճ թռչղ բուրաստան
Շուրջ զմոխին սգնէ պալատ,
Շուայլէ հառոյքներ բազմազան,
Իմ են հառոյք քան զայդ առատ:
Վարդենիք են այտերդ, մանկիկ,
Ուր անթառամ վեթերն ժպիտք:

Զեմ փարթամաց նախանձաբեր,
Թէ վիճակեալ ինձ ի բաժին
Չէ ճաճանչուն ոսկեաց մթեր
Բա'ւ, ինձ չնորհեց զքեզ երկին:
Ֆո դոյութիւն է ինձ, մանկիկ,
Մթեր գանձուց չնաչխարհիկ:

Ս. Մ. ԳԱՍԱՊԵԱՆ

22 դեկտ. ի կարին.

ՅԱՂԱԳՍ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԵԱՑ

(Շարունակութիւն տես Թիւ 14)

Երագուխեան և քաղուխեան այս երկու յատկուխեանցն է դվխաւորապար որ ձին այնպիսի կենդանի մը եղած է շուտով՝ առանց որոյ պատմուխիւնն բաւական ամուր պիտի Թուէր։ Առանց ձիոյ՝ հնարաւոր պիտի չլիներ ոչ Աղեքսանդրի մը արշաւանքներն, ոչ ցեղերու գաղխումներն և ոչ իսկ Քրիստոնեայ ասպետուխիւն մը. միով բանիւ, մարդ անգամ պիտի չանցնէին բոլոր այն հզօր չարժումներն որք չարժեցին զաշխարհ և սաստեցին նոյն իսկ նորա հիմերն. և ժողովուրդք լուին և հանդարտիկ նստելով գետնի վրայ, երբեք իւրեանց սովորական սահմաններն պիտի չխողխին յերկրէ յերկիր երթալու գաղխականուխեանց և կամ պատերազմաց համար։

Բարեբաղդաբար ձին ունէր դեռ ևս ուրիշ կարևոր յատկուխիւններ որք հնարաւոր ըրած էին պատերազմէ զատ ուրիշ նպատակաց համար ևս գործածելու։ Ա.յս յատկուխեանց գվխաւորքն են իւր խորհրդականուխիւն, տոկացող և հաւատարիմ բնուխիւնն։ Ուստի, երբոր պատերազմն Եւրոպացոց գվխաւոր զբաղումն լինելէն դադրեցաւ և հողագործուխիւնն ա նոր տեղն բռնեց, մարդիկ շուտով սկսան գործածել զայն հողագործական նպատակներու համար յորս կը գործածէին եղն մինչև ցայն վայր։

Ցայնժամ ձին առաջին անգամ իրական օգուտ մատակարարեց երկրագործուխեան եւ նշանաւոր դեր մը կատարեց յայնմ։ Բայց մինչեւ հիմա այսպէս չը գործածուիր ձին Ասիոյ մէջ։ Եղը դանդաղ քայլուք կը քարշէ արօրը և սայլը, և հողագործուխիւնն ծանր յառաջադիմած է. սակայն ուր որ ձին գործածուած է, հողագործուխիւնն նոր մղում մը ստացած է։ Մինչև այս օր ձին իւր պատուական յատկուխեանց պատճառաւ բոլոր պատերազմի և հողագործական գործողուխեանց մէջ իրր ամենէն հաւատարիմ ընկեր և օգնական համարուած է։ Ոչ ալ պէտք է մոռնալ այս աղնիւ կենդանին վաճառականուխեանց և արուեստից մէջ։

Բայ ի ձիէն մի քանի ուրիշ կենդանիք, որ հովուական ժամանակաց մէջ սակաւին մեծ գործ չէին յեղափոխեալ, շուտով սկսան երեւիլ։ Սոքա էին էշն, նորա մերձաւոր ազգակիցն ջորին, և այծն։ Բոլոր ատոնք նման որթատունկին, թզենւոյն և ձիթենւոյն, փոքր Ասիայէն եւ Սիւրիայէն թափառելով՝ անցան ի Յունաստան, և, որքան որ զարմանալի թուի, ջորին էշէն յաւել հոն գացած է, որոյ նախնական հայրենիքն Ափրիկէի մէջ փնտռել հարկ է։ Թէ էշն և թէ ջորին վերջերը Յունաստանէն դուրս ելնելով՝ տարածուած են այն նոյն սահմաններուն մէջ յորս որթն ու ձիթենին արդէն տարածուած էին. և ատոնք առ ժամանակ մը այն սահմաններէն դուրս չելան։ Որովհետև, թէպէտ չատ համբերատար և զոհունակ կենդանիներեն սոքա, և իւրեանց այս ընութեամբք կը չատանան ամենէն աղքատիկ ուտելիքներով, սակայն և այնպէս հիւսիսային Եւրոպիոյ կլիման իրենց յարմար եկած չէ, և դեռ ելկուքն ալ իրօք օտարական են հոն։

Այդն ալ դեռատունկ ծառեր, բողբոջներ և անուշահոտ բանջարեղէններ նախընտրելուն համար, միայն այն սահմանաց մէջ կրնայ մեծ թուով պահուիլ ուր այս մասին անոնց հասցուցած ջանաքներն բաղդատաբար փոքր կարևորութիւն ունին։ Վասն որոյ Եւրոպիոյ հիւսիսային սահմաններէն աւելի՝ Յունական կղզեաց, Սիկիլիոյ, Սարտենիայի եւ Իտալիոյ ապառաժուտ լերկութիւններու մէջ աղատաբար կը բնակի, Իտալիոյ մէջ 1363ի մէջ քառատուն և մէկ միլիոն այծ կը դանուէր։

Զորքոտանի կենդանեաց մէջ՝ կատուն չունէին շատ վերջն սկսած է մարդոց ընկերակցիլ։ Եդիպտացիք ընտանեցուցին նախ կատուն, ճանչնալով անոր պիտանութիւնն մուկերն կորսուանելու մէջ, եւ նորա այս յատկութեան համար թոյլտուութիւն ըրին աստուածային պատիւներ ընծայել նմա, և կատուին ընտանութիւնն՝ Եդիպտացւոց կրօնական սովորութեանց արդասիքն է։ Այսու պատճառաւ՝ կատուներու պատկերներ կը դանեմք ուրիշ զարմանալի պատկերներու հետ ի միասին բազմաթիւ Եդիպտական յիշատակարանաց վրայ, և երբեմն դերեզմաններու մէջ կը դանուին բալզամեալ կատուի մումիաներ։

Հին Յոյնք ծանօթացած չէին կատուին, բայց մուկը անչուշտ ճանչցուած էր ամենէն հին ժամանակաց մէջ։ Այս իրողութիւնն աւելի յայտնի կերևի երբոր կը դիտեմք թէ բոլոր Հնդ-Եւրոպական լեզուաց մէջ մի եւ նոյն անունն դործածուած է այս կենդանւոյն համար, եւ այն անունն ալ կը նշանակէ «գող»։ Այդ ժողովուրդք բաղմիցս տանջուած են մուկերու զարհուրելի բազմութենէն, և ամբողջ դաւառներու բնակիչք իրենց բնակավայրն թողած են, մուկերու աւերմանց պատճառաւ։ Այսքան ջնասակար հետեւանք յառաջ բերող այս փոքր կենդանիներն կորսուանելու համար կը դործածէին այն առիւծներն աքիս (էլլինճիկ) և կուղ (սամար)՝ զորս կընտանեցնէին ու կը կրթէին բուն այս նպատակաւ։ Աքիսը մասնաւորաբար ճիշդ կատուին տեղն բռնած էր և կատուի տեղ կերեւէր անոր անունն առակներու և բանաստեղծութեանց մէջ։ Արիստոփանէսի մէջ մարդ մը կը կոչուի պատմութիւն մը ընելու և նա կը սկսի այսպէս. «Անգամ մը մուկ մը եւ աքիս մը կար։» Աւելի վերջին ժամանակաց մէջ պիտի ըսուէր, «Անգամ մը մուկ մը և կատու մը կար»։ Շատ յայտնի է որ կատուն Հռովմայեցւոց ևս այնքան անծանօթ էր որքան Յունաց։ Ովրատիոս Հռովմայեցի բանաստեղծն լռենցի և քաղաքացի մկան պատմութիւն մը չինած է, որոյ մէջ կատու չյիշուիր բնաւ, Ովրատիոս, որ Օգոստոս կայսեր ժամանակն ապրեցաւ, եթէ ծանօթութիւն ունենար կատուի վրայ, անշուշտ պիտի յիշէր զայն յիշեալ պատմութեան մէջ։ Չորրորդ դարուն մէջ առաջին անգամ յիշուած կը դտնեմք կատուն ընտանի կենդանեաց մէջ, և այնուհետև ոչ միայն բոլոր Եւրոպական ժողովրդոց մէջ տարածուեցաւ, բայց փոխադրուեցաւ նաև Ասիա։ Կը կարծուի թէ զայն ընտանեցուցին Եւրոպիոյ մէջ այն խոշոր մկանց անթիւ բազմութեան պատճառաւ

որք հոն գացած էին Ասիայէն յԵւրոպա գաղթողներուն հետ։ Միջին դարուց մէջ նշանաւոր տիկնայք սկսան կատուն իբր խաղալիկ ծառայեցնել իրենց, և զայն կը մնուցանէին իրենց ճրկաց վրայ և կը կերակրէին համով ուտելիքներով, և մինչեւ ցայսօր կատուն շատերուն առջեւ ընդհ գտած է։ Գանուած են նշանաւոր պատկերահանք որք լուրեանց վրձիններ գործածած են զայն նկարելու համար. եւ նշանաւոր բանաստեղծներ տեղ մը տուած են նմա լուրեանց երկասիրութեանց մէջ։ Սակայն և այնպէս տակաւին բազումք դիւական և կախարդական յատկութիւն մը կը նշմարեն անոր վրայ և ճրկած են զայն իրենց համակրութենէն։

Ուրիշ բազմազան կենդանեաց մէջ, թռչունք միշտ նշանաւոր ասպիճանաւ մը մարդկանց ուշադրութիւնն և սէրն ճրաւած են։ Նախնական ժամանակներէ հետէ անթիւ երգեր երգուած են արտոյտին, արագիլին, սոխակին և ծիծեռնակին. ժողովրդային լեզուն ևս բիւր սիրալիր և ընտանի բառերով կողջունէ զանոնք իրենց թռած տեսնեն։ Զգիտազանցութիւն չէ եթէ ըսեմք թէ գարունն իսկ սկսած կ'ըլլի առանց թռչնոց, ճիշդ ինչպէս որ ձմեռն առաւել ամայի և սպրատեսիլ կը լինի անոնց փախստեականէն։ Բայց ամեն բանէ աւելի թռչուններն մեզ հրապուրիչ ընողն՝ նոցա երգեցողութեան և թռչելու կարողութիւնն է։ Վաղեմի ժամանակաց մէջ առանձնաշնորհեալ անձինք կը կարծէին թէ կը հասկնային նոցա խորհրդալից ձայներն, որ իրենց համար ձակատագրի ձայնն էին, քանի որ կամ քալլելը կուտային զուարթագին ձայներով, եւ կամ կը ղգուշացնէին սպառնալից եղանակներով։ Մանաւորաբար թռչիլն գերբնական ին և գմայլման արժանի կը համարուէր, եւ չանք չէ խնայուած այս մասին անոնց նմանելու։ Բայց ճիշդ թռչելու այս կարողութիւնն և անոր հետ կապակցեալ թափառելու գրգիռն է որ անհնարին ըրած է մարդոց՝ իրենց հետ մտատպոյն յարաբերութեանց մէջ դնել թռչնոց մեծագոյն մասն. եւ իրենց օգտակար ընել զանոնք։ Մարդիկ կարողացած են ընտանեցնել միայն զանոնք որք առաւել կամ նուազ թռչելու կարողութիւնն կորսնցուցած են, կամ զանոնք որք թռչող կենդանեաց յատկութիւնն փոքր ասպիճանաւ մը ունին միայն, եւ պարտաւորած չեն ձմրան մէջ իրենց բնակատեղին փոխել։ Այսպէս սակաւաթիւ են անոնք որք այժմ կը նկատուին իբր իրապէս ընտանի կենդանիք որք են հաւ, սագ, բադ, հնդկահաւ և սիրամարգ, որոց մի քանիսն վրայ պիտի խօսիմք։

(Շարունակելի)

ՄԱՀՈՒԱՆ ՄՕՏ ԵԼՈՂԻ ՄԸ ԽՕՍՔԸ

Մարիամ Թէրէզայ երբ մերձ էր մեռանիլ, իւր որդին Յովսէփ որդիական փափուկ զգացումէ անկողնոյն քովը կանգնած կ'ըսէր. «Մայր իմ, մայր իմ, քնացիր սակաւիկ մի։» Մարիամ Թէրէզայ անոր թախանձանքն ընդմիջելով՝ մեղմ և դողդողուն ձայնով մը պատասխանեց.» Յովսէփ, Յովսէփ, որդեակ իմ սիրելի, երբոր Աստուած իւր բարի նախախնամութեամբն կը կանչէ, ով կը համարձակի քնանալ։»

ՄՈՎՍԷՍ ԱԶԱՏԵԱԼ Ի ՋՈՒՐՑ

(Ելք. Բ. 1–10, Գործ. է. 21)

«Ի ծագել արշալուսոյն ջուրք զովագոյնս թաւալին,
«Բորք իմ, եկայք, մի երկնչիք, ընդմէջ՝ մշակն ի տնակին.
«Օ՛ն ընդ առաջ, զի տակաւին ամայի է ափն գետոյն,
«Զի հազիւ չչունչ չըվոթ անդր ի մեհենիս ամբառնան,
«Եւ անմեղ զբօսանացս ի վարսագեղ յայս պուրակ,
«Անկանաւես չիք այլ ոք՝ բայց արշալոյսըն միայնակ։
«Ի պալատի անդ Հօր իմոյ՝ չողան արծաթ եւ ոսկի,
«Ա՛յլ ծաղկաւէտ ափունքս՝ յաւէտ հաճոյ ի յաչս իմ թուին
«Քան զկոնք ոսկիաճոյլ, քան զգաւազան Պորփիւրեան,
«Զառաւօտեան երգս հաւուց ախորժ է ինձ լսել աստ,
«Եւ յաւէտ զանուշարոյր սիրեմ զսիւք զեփիւռիս,
«Քան զպատուական խնկենիս՝ ծխեալս ի մերն արքունիս։ —
«Օ՛ն, եկայք, ջինջ են եթերք, հողմախաղաղ կան ալիք,
«Զմարմանալիկ գօտեաց ձերոց թողէք զծալս կապուտակ,
«Գեղածփիլ օդաթըռիչ ընդ դալարիս ծաղկաճեմ,
«Զվարսակալն իմ հերքեցէք եւ զքողս զայս նախանձոտ,
«Զի զբօսնուլ կամիմ այսօր ընդ ձեզ ի զով առ ափամերձ,
«Օ՛ն փութասցո՛ւք. — Ա՛յլ զինչ ընդ մէջ առաւօտեան նըշմարեմ,
«Հայեցարո՛ւք չուրջ ի Ձեզ մի զանդիտէք, կո՛յսք երկչոտք.
«Բո՛ւն է անշուշտ արմաւենւոյ ալեւոր, որ ի քարէ
«Ա՛ծեալ՝ գայ այլ առնել բըրդանց յանապատիցն ի խորոց.
«Զինչ ասեմ — եթէ կարեմ յաչս իմ երկբայս վստահիլ
«Մակոյկն է այն Հերմեայ (1), կամ հողմավար կոնքն Հիւսեայ (2).
«Ո՛չ, ո՛չ, — այլ կուր է փոքրիկ յորում մանկիկ յանդորրու
«Ննջէ ի ծոց կոհակաց իրրեւ ի գիրկ մայրենի.
«Զարթուսո՛ւթիւն ի քուն կայ ի նաւակին ալեւանջ,
«Եւ ըսպիտակ աղաւնեկի թուի այն լոյն ի հեռուստ.
«Մերթ ի յայսկոյս մերթ ի յայն՝ վարէ զնա հողմըն ըստ հաճոյս.
«— Ծըփի ընդ ջուրս, — իսկ նա ննջէ անկրազեկ վըտանգին
«Եւ անդուռնդք երերածուփք թուին նմա որորանք։
«— Ահա զարթնո՛ւ եւ ճըչէ. եկայք, Մենվիեան օրիորդք,
«Ո՛ր մայր, աւա՛ղ, յողդողդ ալեաց մատնեաց զորդին սիրասուն.
«Ահա ձգէ զբաստակս. ալիք մրմնան յամենուստ.
«Թուի հանգոյն Դիայ որդւոյն յաղթել հեղձնուլ ի յորրանի
«Խիզախելով արհամարհեալ զվիշապաղուէնըս աւեհի. (3)
«Ա՛յլ ոհ, եղո՛ւկ, զի ընդդէմ ահեղ ծովուն հիւրադաւ,
«Օրոցք եւ եթ բեկանուա՝ միակ պատուար է նորին.
«Զերծցի մանկիկդ. — իցէ Թերեւս յեբրայական սերնդոց —

---

(1) Հերմէս. — Որդի Արամազդայ և Մայեայ, աստուած պերճախօսութեան և պատգամաւոր դից։ Առասպելէն զամանէ ածել զհոգիս մեռելոց նուազաւ ի դժոխս։

(2) Առասպելէն Հեթանոս Պատմագիրք զՀիւսեայ, իբրև Ծ ի յանդգնել նմա շրջել ընդ ոլորտս Տիեզերաց կոնքիւ միով։

(3) Հերակղէս մի ի հզօրագոյն դիւցազանցն Յունաց, որդի Դիայ և Ալկմենիայ. Ժնեալ ի Թեմբէ՝ Բէովղիոյ։ Զամանէ բազումբք ստուգիւնք պատմին և դեռ յորրանի անդ, ասեն, հեղբուցանել զօձս երկուս զորս Հերայի դիցուհւոյ յղեալ էր առ ի մահ նորին։

«Զորս յերեսաց երկրի կամի ջնջել Փարաւոն՝
«Հայրն իմ անգութ որ անխնայ զանմեղութիւն հալածէ։
«—Ո՛վ հէք մանկիկ, սիրտ իմ ի քեզ խանդաղատեալ գորովի՝—
«Ես եղէց մայր նըմին, լիցի ինձ նա չնորհատարտ
«եթէ ոչ վասըն ծընըդեան՝ այլ վասն խրոցն կենաց։»
— Այսպէս իւիս գուստըր հզօր թագաւորին բարբառէր, (1)
եւ մինչ առ ափամբ Նեղոսի՝ խուճ նաժշտացն անարատ
Թափառական գնացեցն գհետ երթայր առ ի սպառ,
երբ արքայազնըն դստրիկ զոսկեթել քողն ընկենոյր,
Օրիորդքն գեղագէչք զոյց մըթագնէր նա գգեղ,
Զինքն իսկ ըզնա համարէին գխրխրածին Դիցուհին, (2)
Ընդ փափկիկ ոտիւքն արդէն ահա ալիք մըռընչեն,
Գթութիւն՝ առ ճիչ մանկան ուղղէ զգնացս նորին։ —
Ահա կալաւ նա զմանկտկն եւ խրոխտ ի բեռն յոյն ախոյժ՝
Անդ նախ ի նուագ առաջին ի գեղեցիկ ճակատուն,
Ընդ անկեղծ պատկառանըս ընգելուզեալ խրոխտանք,
Հուպ ընդ հուպ հերձեալ զալիս, եւ գեղեցուն խորտակեալ
Ծանծաղուտ եւ աւազախառն հեղեղատին առ ափամբ
Հանդարտաքայլ ածէ զմանուկն ի կոհակաց մաղապուր.
Եւ քորքն արքայազունք ի տըղայ մանկանն ի ճակատ,
Մի առ մի տային համբոյրս մեղմախառն չըրթամբք,
Գաղցր ի ժպիտ առ հիացեալ բիւս եւ յաչկունըս նորին։
— Ե՛կ դու այժմ, որ ի հեռուստ կացեալ անգութ ի վարանս,
Ակընկառոյց կայիր յորդիդ, զորով երկինք հըսկէին,
Մի՛ երկնչիր, եկ առտանօր, որպէս դայեակ իրր օտար,
Մի՛ երկնչիր ի գիրկս քո սղջապուրել զմօվսէս.
Արտասուք եւ ցնծութիւն ոչ լիցին քեզ մառնատու.
Զի արքայազն այն իւիս չէ տակաւին չէ է մայր։
Օրիորդն յայնժամ զուարթ, մինչդեռ ի քայլս յաղթական,
Առ արքայն վայրենամիտ ածէր զմանուկն զոյն հէք,
Ցարտասուս էր համակեալ ի մայրենի գորովոյն։
— Ցաստեղազարդ կամարն յերկնից անդ լսելի լինէին
Երամք զուարթնոց՝ որ զառաջեաւ թեւատաքղեալ Բարձրելոյն
Ցանկըռելի նուագեալ փանդիռս յօրինէին երգ պէս պէս։
«— Մի՛ եւս հեծեր դու Յակոբ, սահեալ յերկիր դերութեան,
«Մի՛ խառներ զարտասուս քո՛ ի պիղծ ալիս Նեղոսի,
«Ըզդարաւանդս իւր բայցէ ի քուսմ ոսին Յորդանան,
«Մերձենայ օրն աւանիկ յոր ընդ երկիր Աւետեաց
«Տեսցէ գեսեմ ըզգեղըս քո ընդդէմ կամաց թշնամեաց
«Ջերծս ի վախուստս յետ ընդ երկար կալոյ ի խիստ գերութեան.
«Ընդ դիմաք անմեղ մանկանն ի մկանունըս ընկեցիկ,
«Ծըվիւ ընտրեալն Սինայի, ծըվիւ Աբքայն հարուածոց
«Զոր օրիորդ փափկասընիկ թաւիէ յալեաց մաղապուր։
«— Մահացո՛ւք, որ խրոխտացեալ յառնէք ընդդէմ Բարձրելոյն,
«Ծաներո՛ւք, ահա Փրկչին Իսրայէլի օրօրոց,
«Որոյան պրատւեայ վոքրիկ՝ զաշխարհ համայն փրկեսցէ։»

Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈԲԵԱՆ

Եոզղատ 1883 Յունվար 1.

(1) Պատմաբանք ոմանք աւանդեն լինել անուն դստեր Փարաւոնի Իւիս։
(2) Ամբեսէրխ՝ դուստր Ովկէանու և Դարեսի կնոջ Պիսդոնի, դիցուհի ծովու, զորոյ ասեն ունել կառս զորս ձգեն ծովածիք ձիանափայլք հրացայտ աչօք և ծխաշունչ ռնգամբք։

ԱՉՔԸ ԿՐԹԵԼ

Մարդկային սեռին մեծ մասն չեն տեսներ և չեն կրնար տեսնել այն ամենը զոր կարողութիւն ունին տեսնելու։ «Ամենէն աւելի անոնք կոյր են որ տեսնել չեն ուզեր». այս խօսքը թէ բարոյական և թէ ֆիզիքական տեսութեան համար ճշմարիտ է։ Ջանցառութեամբ և անհոգութեամբ անկարող ըլած եմք ինքզինքնիս, այնպէս որ չեմք տեսներ մեր առջև եղած հարիւրաւոր բաները որք կրնան տեսնուիլ։

Սրդի հզօր մատենադիր մը իմաստալից խօսքով մը այսպէս կը բացատրէ զայս ճշմարտութիւն։ «Աչքը այնչափ կը տեսնէ, որչափ կարողութիւն որ կը գործածէ տեսնելու համար։» Ո՛րքան ճշմարիտ է այս։ Նաւաստին կրնայ տեսնել ի հեռուստ նաւ մը զոր ցամաքի վրայ բնակող մարդ մը երբեք չկրնար տեսնել։ Եպիսկոպոսին կրնայ նշմարել ճերմակ աղուէս մը ճերմակ ձիւնին վրայ։ Ամերիկայի անտառաբնակ մը կրնայ իր ատրճանակի դնդակով սկիւռի մը բերնին ընկոյզը զարնել, առանց զնասելու սկիւռին։ Կարմիր Հնդիկ տղայք ձեռքերնին վրը կը վերցունեն եւ վստահ են թէ իրենց ընկերները նետերնին կարճակեն բացուած մատերուն մէջ պիտի ղրկեն։ Ստահղաբաշխը աստղ մը կը տեսնէ յերկինս երբ ուրիշ մարդիկ միայն կապուտակ երկինքը կը տեսնեն։ Հովիւը կրնայ ճանչնալ իր հօտին ոչխարաց իւրաքանչիւրին երեսը։ Ամէն բաղում օրինակներ կրնան յառաջ բերուիլ ցոյց տալու թէ կրթութեամբ ինչ կրնայ լինիլ աչքը։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԳԱՂԻԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ ՏԱԾՈՒՄՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

ԽՄԲԱԳՐԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՎԷՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՏՕՔ. Տ. Ս. ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆԻ

Անդամ Գաղ. Առողջ. Ընկ.

Սոյն հրատարակութիւնը որ կը խօսի առաջին մանկութեան վրայ՝ պատուական գործ մ'է իւր կատարեալ օգտակարութեամբ, որոյ ազատոյց կրնայ համարուիլ Եւրոպական բոլոր լեզուաց թարգմանուած լինելը հաղարաւոր օրինակօք։ Ուրախ եմք որ Մեծ. Տօք. Տ. Ս. Փէշտիմալճեան էֆէնտի ներկայ գործը Հայերէնի թարգմանելով մեծ ծառայութիւն մ'ըրած է ազգին։

Բերկրութեամբ կը ծանուցանեմք նաեւ թէ սոյն գործոյն երկրորդ մասն ալ հրատարակեցաւ վերջերս, այն է «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ եւ ՏԱԾՈՒՄՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ» (Առաջին շրջան 2 տարեվանէ մինչեւ 6 տարեվան)։

ՎՐԻՊԱԿ

Հանդիսս նախորդ ԺԴ. Թուոյ 221^ին երեսի առաջին էջի 4^ին տողին մէջ «բաչք» բառը «բաչք» եւ «զուռն» բառը «զուռն» պիտի կարդացուի։

Նաեւ 223 երեսի վերնագիրն տպագրութեան ամապարանօք ՅԻԼԻՔ եղած է փոխանակ ԲԻՒՐԱԿՆ ի։